ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3145-Ա « 24 » հունիսի 2026թ.

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «ԱՐՔԱ ԴԱՎԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Խաչատուր Ալեքսանի Արոյանի կողմից լիազորված անձ Թորգոմ Վանիկի Սահակյանի դիմումը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշմամբ.

1.«ԱՐՔԱ ԴԱՎԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տրամադրել Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտայի հ.24/3 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվություն:

2. Ընդունել ի գիտություն, որ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար ընթացիկ տարվա 1.500.000 ՀՀ դրամ տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ